ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ

ՀԻՄՆԱՎՈՐ ԳԻՏԵԼԻՔՈՎ ԴԵՊԻ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Թիվ 9(40), 31 հոկտեմբեր, 2021թ.

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԸ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

Հոկտեմբերի 20-ին ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատի առկա անվճար ուսուցման 4-րդ կուրսի սովորողների՝ «Ընտանիքում բռնության և անչափահասների կողմից կատարվող իրավախախտումների կանխարգելումը» առարկայի գործնական պարապմունքը՝ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի ՕՀԳ և քրեագիտության ամբիոնի դոցենտ, ոստիկանության գնդապետ Ա.Սահակյանի կողմից անցկացվեց Հայաստանի Հանրապետության հայ օգնության ֆոնդի երեխաների աջակցության կենտրոնում՝ նպատակ ունենալով ամրապնդել սովորողների ձեռք բերած տեսական գիտելիքները:

Դասախոսության ժամանակ սովորողներին ներկայացվեցին այն հանգամանքները, որոնք պատճառ են դառնում ՀՕՖ-ի երեխաների աջակցության կենտրոնում անչափահասների հայտնվելուն: Դրանք առավելապես ընտանիք չունեցող, անապաստան մնացած, լքված, մուրացկանությամբ զբաղվող կամ բռնության ենթարկված երեխաներ են, որոնք նաև ձեռք են բերել վարքագծի շեղումներ: Սովորողների ուշադրությունը հրավիրվեց կենտրոնում երեխաներին տրամադրվող տարբեր ծառայությունների մատուցման ձևերին՝ ոստիկանության իրավական ծառայություն, բուժօգնություն, հոգեբանական աջակցություն, հակասթրեսային թերապիա և այլն:

Սովորողները տեղում համոզվեցին ոստիկանության աշխատակցի՝ տվյալ գործընթացում ունեցած առանցքային դերակատարման մեջ:

ՄԵԿՆԱՐԿԵՑ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ՓՈՒԼԸ

Հոկտեմբերի 11-ին ՀՀ ոստիկանության կրթահամալիրում մեկնարկեց պարեկային ծառայությունում պաշտոնի նշանակվելու համար ուսուցման և վերապատրաստման մրցույթի երրորդ փուլը՝ հարցազրույցը: Հարցազրույցի փուլ է անցել ընդունելության նախորդ երկու փուլերում դրական միավորներ հավաքած 828 դիմորդ:

Հարցազրույցը զուգահեռաբար իրականացվում է ընդունող հանձնաժողովի կողմից ձևավորված հինգ առանձին հանձնաժողովների կողմից, որոնցից յուրաքանչյուրի կազմում ընդգրկված է մեկական ներկայացուցիչ ՀՀ ոստիկանությունից, ՀՀ արդարադատության նախարարությունից, հասարակական կազմակերպություններից, միջազգային գործընկեր կազմակերպությունից և մեկ հոգեբան:

Հարցազրույցի ընթացքում հանձնաժողովը նախապես հաստատված հարցաշարի միջոցով ստուգում է դիմորդների հոգեբանական կայունությունն ու ինքնատիրապետումը, հաղորդակցության կարողությունները, ինչպես նաև բարեվարքությունն ու ընդհանրական պատկերացումներ արժեհամակարգի մասին:

Հաջողություն ենք մաղթում դիմորդներին:

ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԸ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎԵՑԻՆ ՉԵԽԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հոկտեմբերի 10-15-ը Չեխիայի Հանրապետության ոստիկանության անվտանգության զարգացման ծրագրի շրջանակներում՝ «Դեպքի վայրի զննություն» թեմայով վերապատրաստում անցնելու նպատակով Չեխիայի ոստիկանության ուսումնական և վերապատրաստման վարչության Պարդուբիցեի ուսումնական կենտրոն էին այցելել ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ծառայողներ՝ ոստիկանության փոխգնդապետ Գրիգորի Դավթյանը, ոստիկանության մայոր Գարիկ Խուդոյանը, ոստիկանության փոխգնդապետ Մերի Մանուկյանը, ոստիկանության մայոր Ազատ Բագրատյանը, ոստիկանության մայոր Լուսինե Սարդարյանը, ոստիկանության մայոր Ալիսա Սմբատյանը, ոստիկանության մայոր Արթուր Հակոբյանը, ոստիկանության կապիտան Նվարդ Վարյանը և ոստիկանության կապիտան Դավիթ Խաչատրյանը՝ ՀՀ ոստիկանության միջազգային համագործակցության վարչության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Արմեն Սեդրակյանի գլխավորությամբ:

Դասընթացների ժամանակ պատվիրակության անդամները հանդիպեցին Ուսումնական կենտրոնի պետ, գնդապետ Յիրի Ֆեյֆարի հետ, որը ներկայացրեց կենտրոնի կառուցվածքը և ուսումնական ծրագրերը: Այցի ընթացքում պատվիրակությանը մանրամասն ներկայացվեցին կրիմինալիստիկայի և իրավագիտության բաժնի ուսումնական ծրագրերը, դասավանդման մեթոդիկան և նյութատեխնիկական բազան: Վերապատրաստվողներն այցելեցին գործող փորձակայաններ, մասնագիտացված լսարաններ, հատուկ վարժանքների համար նախատեսված բացօթյա հրապարակ, մասնակցեցին նաև Ուսումնական կենտրոնի պայթյունատեխնիկական բաժնի կազմակերպած դասընթացին:

Ընդունող կողմի նախաձեռնությամբ ՀՀ ոստիկանության ներկայացուցիչներն այցելեցին Չեխիայի Հանրապետության ոստիկանության Պարդուբիցեի վարչություն, որտեղ իրական պայմաններում վարչության քրեագիտական տեխնիկայի բաժնի աշխատակիցները ծանոթացրին իրենց ամենօրյա ծառայության մանրամասներին, գործառութային պարտականություններին և կիրառվող նյութատեխնիկական միջոցներին: Հնարավորություն ընձեռվեց նաև ծանոթանալու վարչությունում գործող արագ արձագանքման կենտրոնի աշխատանքներին:

Գործուղման վերջին օրն այցելություն կազմակերպվեց Չեխիայի ոստիկանության քրեագիտության ինստիտուտ, որտեղ աշխատակիցները ներկայացրին ինստիտուտի փորձագիտական տարբեր ոլորտների փորձաքրեագիտական լաբորատորիաները, մասնագիտական նրբությունները և կիրառվող ժամանակակից սարքավորումները: Նույն օրը կայացավ նաև պատվիրակության հանդիպումը ՀՀ ոստիկանության ուսումնական և վերապատրաստման վարչության աշխատակիցների հետ, որի ընթացքում պայմանավորվածություն ձեռք բերվեց շարունակել համագործակցությունը:

Դասընթացի ավարտի կապակցությամբ վերապատրաստվողներին տրվեցին ավարտական հավաստագրեր:

Այցից ձեռք բերած լավագույն փորձն ու գիտելիքներն այսուհետ կկիրառվեն նաև ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսումնական ծրագրերում:

ԵԱՀԿ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՅՑԸ ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ

Հոկտեմբերի 19-ին ՀՀ ոստիկանության կրթահամալիր էին այցելել ԵԱՀԿ Քարտուղարության ոստիկանությանն առնչվող ռազմավարական հարցերի բաժնի համայնքային ոստիկանության գծով խորհրդատու Մոնա Նորդբերգը և ծրագրի ազգային համակարգող Ռուզանա Բաղդասարյանը:

Հյուրերին դիմավորեցին Կրթահամալիրի պետի պարտականությունների ժամանակավոր կատարող, ոստիկանության փոխգնդապետ Միսակ Մարկոսյանը, ուսումնամեթոդական և զարգացման վարչության պետ, ոստիկանության մայոր Արտակ Մնացականյանը, միջազգային համագործակցության և ՏՏ ներդրման բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ Գրիգորի Դավթյանը:

Մ. Մարկոսյանն այցելուներին ներկայացրեց ՀՀ ոստիկանության կրթահամալիրում իրականացվող ուսումնական ծրագրերը և կառուցվածքը: Կողմերը քննարկեցին երկուստեք հետաքրքրություն ներկայացնող հեռանկարային ծրագրեր, որոնք առնչվում են ինչպես իրականացվող կրթական ծրագրերին, այնպես էլ դասավանդող անձնակազմի վերապատրաստմանը:

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ՊԵՏ ՈՒՆԻ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական աշխատանքների բաժնի պետ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, ոստիկանության մայոր Արտակ Մնացականյանը 06.10.2021 նշանակվել է ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսումնամեթոդական և զարգացման վարչության պետի պաշտոնին:

Ա.Մնացականյանը ծառայության ընթացքում միշտ աչքի է ընկել աշխատասիրությամբ և նորարար մոտեցումներով, հեղինակ է մի շարք գիտական աշխատությունների:

Նորընծա վարչության պետին մաղթում ենք բեղուն, մասնագիտական ձեռքբերումներով լի աշխատանքային գործունեություն:

ՀԻՄՆԱՎՈՐ ԳԻՏԵԼԻՔՈՎ ԴԵՊԻ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Սեպտեմբերի 30-ին ՀՀ ոստիկանության կրթահամալիրում տեղի ունեցավ Կրթահամալիրի ակադեմիայի, քոլեջի և ուսումնական կենտրոնի նորակոչիկ սովորողների երդման հանդիսավոր արարողությունը:

Արարողությանը ներկա էին Կրթահամալիրի ղեկավար կազմը, սովորողների հարազատներն ու ընկերները:

Շնորհավորական խոսքով ելույթ ունեցավ Կրթահամալիրի պետի պարտականությունների ժամանակավոր կատարող, ոստիկանության փոխգնդապետ Միսակ Մարկոսյանը, ով մասնավորապես նշեց. «Սիրելի՛ սովորողներ, երդումը յուրաքանչյուր ոստիկանի կյանքի կարևոր իրադարձություններից մեկն է: Այսօր դուք ինքներդ ձեր երդման տեքստում առաջադրեցիք այն չորս ելակետային ուղենիշները, որոնցով հետայսու պետք է ղեկավարվեք ձեր մասնագիտական գործունեության ընթացքում: Այդ ուղենիշներն են՝ արդարությունը, ազնվությունը, անկողմնակալությունը և բարեխղճությունը: Եվ միշտ հիշե՛ք Կրթահամալիրի կարգախոսը՝ հիմնավոր գիտելիքով դեպի արժանապատիվ ծառայություն»:

Երդման արարողությունն ավարտվեց հանդիսավոր քայլերթով:

ԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԱԿԻ 2021-2022 ՈՒՍՏԱՐՎԱ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԸ

2021 թվականի հոկտեմբերի 22-ին տեղի ունեցավ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի պետության և իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ու վարչական իրավունքի և ոստիկանության վարչական գործունեության ամբիոններին կից գործող պետահրավական առարկաների գիտական խմբակի 2021-2022 ուստարվա առաջին նիստը:

Նիստին ներկա էին Կրթահամալիրի ակադեմիայի պետության և իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի պետի պարտականությունների ժամանակավոր կատարող, ոստիկանության փոխգնդապետ Ա. Սաֆարյանը, նույն ամբիոնի ավագ դասախոս, ոստիկանության փոխգնդապետ Մ. Մանուկյանը, վարչական իրավունքի և ոստիկանության վարչական գործունեության ամբիոնի պետ, ոստիկանության մայոր Գ. Խուդոյանը, նույն ամբիոնի դասախոս, ոստիկանության մայոր Ա. Մարգարյանը, Կրթահամալիրի գիտական աշխատանքների բաժնի գիտաշխատող, ոստիկանության կապիտան Ն. Վարդանյանը, մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի քրեական արդարադատության ոլորտում իրավունքների պաշտպանության վարչության առաջատար մասնագետ Սոֆյա Զախարյանը, ՀՀ ոստիկանության Հրազդանի բաժնի Ծաղկաձորի բաժանմունքի պետ, ոստիկանության մայոր Ժաննա Շահնազարյանը:

Գիտական խմբակի նիստի թեման էր՝ «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքներ և հնարավորություններ»:

Նշված թեմայով գիտական զեկույցով հանդես եկավ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի քրեական արդարադատության ոլորտում իրավունքների պաշտպանության վարչության առաջատար մասնագետ Սոֆյա Զախարյանը: Նա ներկայացրեց մարդու իրավունքների պաշտպանի հաստատության դերը և անդրադարձավ կանանց իրավունքների ապահովման ոլորտում պաշտպանի աշխատակազմի կողմից արձանագրված խնդիրներին:

Գիտական նյութը ներկայացնելուց հետո նիստի մասնակիցների կողմից զեկուցողին ուղղվեցին հարցեր, որոնց տրվեցին սպառիչ պատասխաններ:

ԱՄՆ ԴԵՍՊԱՆԱՏԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԱՅՑԸ ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ

Հոկտեմբերի 1-ին ճանաչողական այցով ՀՀ ոստիկանության կրթահամալիրում էին ԱՄՆ դեսպանատան Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության ծրագրի ղեկավար Ալեքսիս Հաֆթվանին, նույն ծրագրի իրավական հարցերով ավագ խորհրդատու Ադի Հոլովեյը և փորձագետ Կարինե Քեշաբյանը, ինչպես նաև ՀՀ ոստիկանության շտաբի միջազգային համագործակցության վարչության պետի տեղակալ, ինքը և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության բաժնի պետ, ոստիկանության գնդապետ Արմեն Սեդրակյանը:

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետի պարտականությունների ժամանակավոր կատարող, ոստիկանության փոխգնդապետ Միսակ Մարկոսյանի գլխավորությամբ հյուրերին դիմավորեցին ուսումնական կենտրոնի պետ, ոստիկանության գնդապետ Արմեն Սուքիասյանը և միջազգային համագործակցության և SS ներդրման բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ Գրիգորի Դավթյանը:

Մ.Մարկոսյանի ուղեկցությամբ հյուրերը շրջեցին ՀՀ ոստիկանության կրթահամալիրի տարածքով, այցելեցին Կրթահամալիրի ուսումնական կենտրոն, նոր կառուցված փորձակայան, ծանոթացան նաև պարեկային ծառայությունում պաշտոնի նշանակվելու նպատակով ուսուցման ընդունելության ֆիզիկական պատրաստականության ստուգումների ընթացքին:

Հանդիպումը շարունակվեց Մ. Մարկոսյանի աշխատասենյակում, որտեղ նա ներկայացրեց Կրթահամալիրի կառուցվածքը, իրականացվող ուսումնական ծրագրերը, առանձնակի մանրամասնությամբ անդրադարձավ նոր պարեկային ծառայության ուսումնական գործընթացին, նյութատեխնիկական ապահովվածությանը և կուտակված փորձին:

Կողմերը քննարկեցին նաև փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր, պայմանավորվեցին այսուհետ ևս արդյունավետ շարունակել համագործակցությունը:

ԴԱՏԱԽԱՂ - ՄՐՑՈՒՅԹ

Արդեն 6-րդ տարին է, որ ՀՀ ոստիկանության կրթահամալիրն անընդմեջ մասնակցում է Միջազգային համագործակցության գերմանական հիմնադրամի (IRZ) և ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի կողմից կազմակերպվող՝ քրեական իրավունքի և քրեական դատավարության հիմնախնդիրներին նվիրված մրցույթ-դատախաղին:

Այս տարի դատախաղի գրավոր փուլը հաղթահարել էին հայտ ներկայացրած բուհերի թիմերից միայն 5-ը, այդ թվում՝ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի «Ex Lege» թիմը: Կրթահամալիրի ակադեմիայի թիմի կազմում ընդգրկված էին ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի անվճար ուսուցման 4-րդ կուրսի սովորողներ Սերոբ Ազատյանը, Հակոբ Քոչարյանը և Արևիկ Հարությունյանը: Թիմի մարզիչն էր ՀՀ ոստիկանության կրթահամալիրի դասախոս, ոստիկանության կապիտան Նվարդ Վարյանը:

Սեպտեմբերի 24-ից 25-ն անցկացվեց դատախաղի բանավոր փուլը, որի ժամանակ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի «Ex Lege» թիմը հանդես եկավ որպես մեղադրանքի կողմ ԱրՊՀ «Արցախ» թիմի հետ խաղում և որպես պաշտպանության կողմ՝ Հայ-ռուսական համալսարանի «ՀՌՀ» թիմի հետ խաղում:

Ինչպես և նախորդ տարիներին, այս տարի ևս միջբուհական դատախաղ-մրցույթի ավարտին մասնակից թիմերի անդամներին հանձնվեցին պատվոգրեր և մրցանակներ դատախաղի կազմակերպիչների, ՀՀ տարբեր կառույցների և պաշտոնատար անձանց կողմից:

Հպարտությամբ նշենք, որ «Լավագույն պաշտպանական ճառ» անվանակարգում հաղթեց ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի «Ex Lege» թիմի անդամ Սերոբ Ազատյանը:

ԲԱՑ ԴԱՍ՝ ՆՎԻՐՎԱԾ ԱՊՀ-Ի ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ 30-ԱՄՅԱԿԻՆ

2021 թ. սեպտեմբերի 29-ին ՀՀ ոստիկանության կրթահամալիրի քոլեջի 2-րդ կուրսում անցկացվեց ԱՊՀ-ի կազմավորման 30-ամյակին նվիրված բաց դաս՝ համաձայն ԱՊՀ անդամ երկրների կրթության ոլորտում համագործակցության խորհրդի 2020թ. հոկտեմբերի 21-ի նիստում կայացված որոշման:

Միջոցառման նախաձեռնությունը լեզուների ամբիոնի պետ, ոստիկանության գնդապետ Ա. Հայրապետյանինն էր: Դասը մշակեց և վարեց լեզուների ամբիոնի դասախոս, ոստիկանության մայոր, մանկավարժական գիտությունների թեկնածու Մ. Առաքելյանը: Քննարկումն անցկացրեց հրավիրված դասախոս, պատմական գիտությունների դոկտոր Ռ. Սահակյանը: Դասին ներկա էր ՀՀ ոստիկանության քոլեջի ֆակուլտետի պետ, ոստիկանության կապիտան, իրավաբանական գիտությունների թեկնածու Վ. Սայադյանը:

Բաց դասին ներկայացվեցին ԱՊՀ-ի ստեղծման պատմությունը, կառույցի գործառույթները, դրոշը, նախաձեռնությունները և Հայաստանի Հանրապետության դերը ԱՊՀ-ի կազմում: Ուսումնական գործընթացն իրականացվեց բացատրության, էլեկտրոնային նյութերի ցուցադրության, խմբային աշխատանքի և քննարկում-բանավեճի միջոցով: Սովորողները հանդես եկան ԱՊՀ-ի վերաբերյալ հետաքրքիր տեղեկություններով, ապա քննարկման փուլում բազմաթիվ հարցեր ուղղեցին պատմական գիտությունների դոկտոր Ռ. Սահակյանին:

Միջոցառումը բավականին ուսուցողական էր և նպաստեց սովորողների ընդհանուր զարգացմանը: Ոստիկանության կապիտան Վ. Սայադյանը բարձր գնահատեց բաց դասի անցկացումը՝ ընդգծելով նման միջոցառումների դերը բազմագիտակ ոստիկանի կերտման գործում:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 11-ՐԴ ՆԻՍՏԸ

Սույն թվականի հոկտեմբերի 5-ին տեղի ունեցավ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական խորհրդի 2021 թվականի 11-րդ նիստը:

Օրակարգի հարցերի քննարկման արդյունքում գիտական խորհուրդը որոշեց փոփոխություններ կատարել «Ոստիկանական գործ» մասնագիտության «Պարեկ» որակավորման նախնական մասնագիտական կրթական ծրագրով ուսուցման և դրան համապատասխան լրացուցիչ կրթական ծրագրով վերապատրաստման ընթացքում ստուգարքների և դիֆերենցված ստուգարքների անցկացման կարգում, քննարկվեց նաև ակադեմիայի 2 նախկին սովորողների վերականգնման հարցը:

ՀԱՄԱՌ, ՀԵՏԱՔՐՔՐԱՍԵՐ, ՆՊԱՏԱԿԱՍԼԱՑ

«Կրթահամալիրի սովորողները» խորագրով նոր նախագծի շրջանակներում այս անգամ զրուցել ենք ՀՀ ոստիկանության ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի առկա անվճար ուսուցման 4-րդ կուրսի 2-րդ դասակի սովորող, ոստիկանության ավագ սերժանտ Արևիկ Հարությունյանի հետ:

Գնացինք...

- Խոսենք մանկությունից: Ինչպիսի՞ն էր այն, ո՞վ էր քո հերոսը:

Մանկությունս բավականին տպավորված է հիշողությանս մեջ: Շատ ակտիվ, աշխույժ, չարաճճի և, միաժամանակ, նեղացկոտ երեխա եմ եղել:

Կդժվարանամ նշել կոնկրետ հերոսի, բայց ինչպես ցանկացած հետաքրքրասեր երեխա, ես նույնպես տարված եմ եղել տարբեր հեքիաթներով, հրաշագործություններով, առեղծվածային կերպարներով, որոնց փորձել եմ նմանվել:

- Ինչպիսի՞ն էին դպրոցական տարիները: Կպատմե՞ս այդ տարիներից:

Դպրոցական տարիները նույնպես շատ հետաքրքիր են անցել՝ լի բազում արկածներով: Երբեք չեմ տրտնջացել և յուրաքանչյուր օր մեծ սիրով եմ դպրոց հաճախել: Ունեցել եմ գերազանց առաջադիմություն, հաճախել եմ տարբեր խմբակների, բայց դա ինձ չի խանգարել տարատեսակ չարաճճիություններ անել՝ շատախոսել, վիճաբանել, դասերից փախչել:

- Գիրքգ ո՞ր գիրքն է, որ երկրորդ անգամ կընթերցես:

Առհասարակ գրքեր կարդալ շատ եմ սիրում: Վերջերս ընթերցել եմ Ալեքս Մայքլիդիսի «Լռակյաց հիվանդը» գիրքը, որից բավականաչափ տպավորված եմ: Կարծում եմ՝ մեծ հաճույքով ևս մեկ անգամ կվերընթերցեի:

- Խոսենք նախասիրություններից. ի՞նչն է, որ մի քանի ժամով քեզ կտրում է իրական կյանքից:

Նախասիրություններ շատ ունեմ, հատկապես՝ ընթերցանությունը, նկարելը (որն այդքան էլ չի ստացվում), դաշնամուր նվագելը, ֆիլմեր դիտելը...

Կարծում եմ՝ այն, ինչ ինձ ստիպում է կտրվել իրական կյանքից, ընթերցանությունն է:

- Ո՞րն է ոստիկան դառնալու քո շարժառիթը:

Ոստիկան դառնալու իմ շարժառիթը հայրենիքիս արժանապատիվ ծառայելու, արդարության ու հավասարության հասնելու ձգտումն է, որի իրագործմանն ինձ կարող է օգնել հենց այս մասնագիտությունը:

- Եթե հնարավորություն տրվեր փոխելու մասնագիտությունդ, ի՞նչ կընտրեիր:

Կարծում եմ՝ կա՛մ դաշնակահարուհի կդառնայի, կա՛մ բժշկուհի, բայց, իհարկե, ընտրեցի այն մասնագիտությունը, որն ինձ ավելի հոգեհարազատ է:

- Թեմա, որի շուրջ անդադար կխոսես:

Արվեստ, բնություն, ինքնաճանաչողություն, հոգեբանություն, որոնց մասին կարող եմ ժամերով խոսել:

- Ինչի՞ մասին էիր երազում պատանեկության տարիներին:

Իմ նպատակներով ու երազանքներով ձգտել եմ լինել այնպիսի անձնավորություն, որով առաջին հերթին կհպարտանան ծնողներս, և կարծում եմ՝ ես դրա ճանապարհին եմ:

- Շարժառիթգ ո՞րն է կյանքի շարժառիթը քեզ համար:

Կյանքի շարժառիթն ինձ համար ինքս ինձ յուրովի բացահայտելն է, սեփական թերությունները հայտնաբերելն ու դրանց վերացման ուղիները գտնելն է:

- Մի քանի բառով նկարագրի՛ր Կրթահամալիրի սովորողի կերպարը:

Որպես ապագա ոստիկան՝ Կրթահամալիրի սովորողը պետք է լինի կարգապահ, պատասխանատու, անձնուրաց, պատրաստակամ, հավասարակշռված, համբերատար և ունենա համապատասխան գիտելիքների մեծ պաշար:

- Ի՞նչ խորհուրդ կտաս նրանց, ովքեր ցանկանում են ընտրել Կրթահամալիրը:

Խորհուրդ կտամ՝ ընտրություն կատարելուց բավականին երկար մտածեն, քանի որ կրթահամալիրում սովորելը շատ բարդ ու պատասխանատու գործընթաց է ենթադրում, բայց միաժամանակ հետաքրքիր և յուրահատուկ: Կրթահամալիրը խիստ տարբերվում է մյուս ուսումնական հաստատություններից, և ընտրելով ոստիկանի մասնագիտությունը՝ պետք է պատրաստ լինել բազում փորձությունների:

- Դուք կին ոստիկան եք և...

Ես կին ոստիկան եմ և ձգտում եմ, կին լինելով հանդերձ, համապատասխանել մասնագիտությանս և նպաստել հասարակության մեջ գոյություն ունեցող արատավոր երևույթների վերացմանը:

-Եթե ոչ ոստիկան, ապա՞...

Դաշնակահարուհի:

- Սիրած գիրքը:

Սիրածս գրքերի շարքում կառանձնացնեմ Ջոջո Մոյեսի «Ես մինչ քեզ» գիրքը, որը մարդկային իրական զգացմունքների մասին է և նրա մասին, որ յուրաքանչյուր պարագայում կյանքը շարունակվում է:

Բլից հարցեր

Պատասխանում ենք կարճ և արագ

- Երեք բառ, որով կբնորոշես ինքդ քեզ:

Համառ, հետաքրքրասեր, նպատակասլաց:

- Միտք, որն առաջինը ծագում է արթնանալիս:

Ինչպես կանցնի օրս, և ինչեր կհասցնեմ սովորել:

- Օրն սկսում ես ժամը...

Օրս սկսում եմ 6:30-ին:

- Սիրածդ աֆորիզմը:

Միշտ արա՛ այն, ինչ վախենում ես անել:

- Սիրելի զբաղմունքդ:

Ընթերցանություն:

- Խորհուրդ, որը կտայիր:

Ունեցի՛ր թեկուզ փոքր խելք, բայց՝ քոնը:

- Իսկ վերջում... (ավելացրու՛ այն, ինչ մտքովդ անցնում է այս պահին)

Գնահատի՛ր քեզ, քո բառը, քո մտքերը:

Հարցազրույցը վարեց
ոստիկանության
ավագ լեյտենանտ
Մարիետա Խերանյանը

«ԽԱԼԴ ԱՍՏԾՈ ՄԵԾՈՒԹՅԱՄԲ ԱՐԳԻՇՏԻՆ՝ ՄԵՆՈՒԱՅԻ ՈՐԴԻՆ, ԱՅՍ ԱՆԱՌԻԿ ԱՄՐՈՑԸ ԿԱՌՈՒՑԵՑ ԵՎ ԱՆՎԱՆԵՑ ԷՐԵԲՈՒՆԻ ՔԱՂԱՔ՝ Ի ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆ ԲԻԱՅՆԱ ԵՐԿՐԻ ԵՎ Ի ՍԱՐՍԱՓ ԹՇՆԱՄԻՆԵՐԻ»

Այս սեպագիր արձանագրությունն արդեն 2803 տարեկան է...

Այսօր Էրեբունի-Երևանը 2803 տարեկան է: Մ. թ. ա. 9-րդ դարում Հայկական լեռնաշխարհի Վանա լճի ավազանում առաջացավ Վանի հայկական (Արարատյան) թագավորությունը՝ Ուրարտուն, Բիայնիլին: Պետության հիմնադիրը Արամե թագավորն էր: Վանի թագավորությունը ժամանակի ամենազարգացած տերություններից էր: Արգիշտի Առաջին արքան տիրակալության 5-րդ տարում կառուցեց այն որպես բերդաքաղաք: Առաջին բնակիչները 6600 զինվորներ էին: Արգիշտի Առաջինի թողած սեպագիր արձանագրությունը վկայում է. «Խալդ աստծո մեծությամբ Արգիշտին՝ Մենուայի որդին, այս անառիկ ամրոցը կառուցեց և անվանեց Էրեբունի քաղաք՝ ի հզորություն Բիայնա երկրի և ի սարսափ թշնամիների»: Արգիշտին ասում է. «Հողն ամայի էր, այստեղ ես մեծ գործեր կատարեցի: Խալդ աստծո մեծությամբ Արգիշտի՝ Մենուայի որդի, արքա հզոր, արքա Բիայնա երկրի, տերը Տուշպա քաղաքի»:

Պահպանված պատմական այդ արձանագրությունը հնարավորություն է տվել գիտնականներին հստակեցնելու Երևանի ծննդյան տարեթիվը: Էրեբունի-Երևանը հիմնադրվել է Հռոմից 29 տարի առաջ, Բաբելոնի, Նինվեի ու Պերսեպոլիսի հասակակիցն է, բայց, ի տարբերություն վերջիններիս, դարձել է 21-րդ դարի ծաղկուն քաղաքներից մեկը:

Էրեբունի ամրոցը գտնվում է Արին Բերդ կոչվող բլրի վրա: Այն կառուցվել է մ. թ. ա. 782 թ. ուրարտական թագավոր Արգիշտի Առաջինի կողմից: 19-րդ դարում սկսվեցին բլրի պեղումները, որոնց ընթացքում հայտնաբերվեց այն սեպագիր արձանագրությունը՝ ըստ որի այժմյան Երևանի պատմությունն սկսվում է հենց այստեղից: Բլրի գագաթին գտնվող ամրոցի ավերակներն ու որմնանկարները խոսում են այդ հեռավոր դարերի բարձր գեղարվեստական նվաճումների մասին: Բլրի ստորոտին է գտնվում թանգարանը, որը ցուցադրում է պեղումների ընթացքում հայտնաբերված գտածոները:

Էրեբունու հնչյունափոխությամբ դարձած Երևանը Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքն է և պատմական Հայաստանի տասներկուերորդ մայրաքաղաքը, որն աշխարհի հնագույն բնակավայրերից ու շարունակաբար բնակեցվող հին քաղաքներից մեկն է:

Հնագիտական պեղումները վկայում



են, որ Էրեբունին վարչական խոշոր կենտրոն էր՝ ամենահզորը Արարատյան դաշտում:

Դարերի ընթացքում քաղաքը մնացել է կանգուն՝ անցնելով բազում արհավիրքների ու փորձությունների միջով: Անթիվ են եղել ասորիների, հռոմեացիների, բյուզանդացիների, պարսիկների, արաբների, սելջուկների, մոնղոլների ու թուրքերի ասպատակությունները, բայց ժողովուրդը շարունակում էր արարել՝ դիմակայելով բոլոր արհավիրքները: Զուգահեռաբար ստեղծվել է քաղաքակրթություն՝ արժեքավոր մշակույթով ու գիտությամբ:

Երևանն ասորեստանյան սեպագիր արձանագրություններում հայտնի է իբրև Ուրարտու, իսկ Աստվածաշնչում հիշատակվում է իբրև Արարատյան թագավորություն (Երեմիա, գլ. ԾԱ): Ապացույցի կարիք չկա. այս պատմությունը փաստագրված է քարի, կավի ու բրոնզի վրա գրված 600 սեպագիր տեքստերով: Մեզ հասած ուրարտական աղբյուրներում Էրեբունի անունը հիշատակվում է 12 անգամ:

Ասօրվա նորելուկ ելուզակներն իրեց խակ ուղեղով աշխարհին փորձում են համոզել, որ իրենք հնագույն ազգ են (թեև 100 տարի էլ չկա, որ գոյություն ունեն), և Հայաստանն իրենց հնագույն հայրենիքն է, բայց որքան էլ ավերեն, ջնջեն հետքերը, հո սեպագրերն էլ չե՞ն կարող ջնջել:

Երևանն ունի իր «քարե անձնագիրը», որը ցուցադրված է Հայաստանի պատմության պետական թանգարանում. քաղաքի սկզբնավորումն ավետող բազալտի հնամյա քարի վրա փորագրված է. «Այս ամրոցը հոյակապ կառուցեցի»:

Հին Երևանի մասին պատկերացում ենք կազմում ոչ միայն հայ հեղինակների աշխատություններից (Եր. Շահազիզ «Հին Երևան», Թ. Հակոբյան «Երևանի պատմություն»), այլև եվրոպացի ճանապարհորդների գրքերից:

Ֆրանսիացի ճանապարհորդ Ժան Բատիստ Տավերնիեն, 1632-1662թթ. ընթացքում վեց անգամ լինելով Հայաստանում, գծել է քաղաքի հա-

▶ 4

«ՄԵՆՔ»-Ը ԴԱՐՁՆԵՆՔ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Լինես, մնաս ամենքի հետ, նրանց կամքին հպատակվես,
«Ես»-դ խառնես մեծ «Մենք»-ի հետ,
Նրանց ցավով լուռ տապակվես:
Պարույր Սևակ

Հաճախ եմ հարց տալիս, թե լինելով դարերի խորքից եկած ու դեպի դարերիը գնացող փառապանծ ազգի զավակ՝ ո՞րն է իմ առաքելությունն այս մարտահրավերներով լեցուն դարում: Բազում տառապանքների ու փորձությունների ենթարկված իմ ժողովուրդը, որ քիչ է քանակով, բայց տաղանդավոր է ու արարող, ի՞նչ ծրագրերով պետք է առաջնորդվի, ո՞րն է յուրաքանչյուրիս սուրբ ու նվիրական անելիքը, որը պետք է հնարավորություն տա դիմակայելու մեր թշնամիների հայակործան ու հայադավ նկրտումներին: Այսօր, երբ մարտերում կորցրել ենք մի խանդավառ երիտասարդություն, երբ հայ ժողովուրդն արնաքամ է եղել անհավասար մարտերում և կորցրել հայրենիքի մի զգալի մասը, առավել քան երբևէ պետք է լինենք միասնական՝ «Մենք»-ը դարձնելով գաղափարախոսության հիմք: «Մենք»-ի գիտակցությամբ պետք է վերականգնենք սերը միմյանց հանդեպ, հարգանքն ու փոխըմբռնումը, հավատը գալիք օրվա հանդեպ: Խոհեմաբար պետք է հասկանալ, որ ժամանակ չկա երկմտելու, հապաղելու, որովհետև ցանկացած կասկածանք ու պառակտում կործանարար կլինի մեր ազգի, մեր պետականության համար: Երբեմն ամաչում եմ այն մտքից, որ հզոր մշակույթ ունեցող ազգս ունենում է հուսալքության պահեր, և շատերը հեշտ ու հանգիստ բռնում են օտարության ճամփաները: «Մենք»-ով պետք է կերտենք մեր վաղվա օրը, իսկ վաղվա լուսաբացները, հավատացած եմ, դեռ հաղթանակներով են բացվելու, բացվելու են նոր սխրագործություններով, իսկ դրան նպաստելու են մեր հավերժի ճամփորդ դարձած «լույս տղաների» անմահ հոգիները: Մենք, որ մեր գոյության ողջ ընթացքում ապավինել ենք մեր մեծ հավատին ու բազկին, իրավունք չունենք ընկրկելու, իրավունք չունենք դժվարին պահերին մենակ թողնելու երկիրը, լքելու սրբությունները:

Շուտով կբոլորի իմ տասնութ տարին,և կգորակոչվեմ հայոց բանակ՝ իմ պարտքը տալու հայրենիքիս ու ազգիս, և հպարտ եմ, որ հնարավորություն ունեմ երկու տարի պաշտպանելու իմ տարեկից տղաների արյամբ գծված սահմանները, որ պատիվ ունեմ ծառայելու իմ ժողովրդին, հսկելու իմ օջախի խաղաղ քունը: Կոչս է իմ տարեկից ընկերներին՝ նորովի նայել կյանքին, վերանորոգվել հոգով, չզբաղվել ինքնախաբեությամբ և հանուն մեր վաղվա հաղթանակների՝ ապրել, սովորել, գործել ու պայքարել՝ մեր անձնական «Ես»-ը խառնելով մեծ «Մենք»-ին:

Ավետ Ավետիսյան
ակադեմիա, 1-ին կուրս

«ԽԱԼԴ ԱՍՏԾՈ ՄԵԾՈՒԹՅԱՄԲ ԱՐԳԻՇՏԻՆ՝ ՄԵՆՈՒԱՅԻ ՈՐԴԻՆ, ԱՅՍ ԱՆԱՌԻԿ ԱՄՐՈՑԸ ԿԱՌՈՒՑԵՑ ԵՎ ԱՆՎԱՆԵՑ ԷՐԵԲՈՒՆԻ ՔԱՂԱՔ՝ Ի ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆ ԲԻԱՅՆԱ ԵՐԿՐԻ ԵՎ Ի ՍԱՐՍԱՓ ԹՇՆԱՄԻՆԵՐԻ»

3 ◀ տակագիծը և նկարագրել Երևանը՝ իբրև երկու-երեքհարկանի տներով կառուցապատված և պարտեզներով ու խաղողի այգիներով շրջապատված մի գողտրիկ քաղաք:

Երևանը մանրամասն նկարագրել է նաև 1673 թ. պարսից արքունի ակնագործ, ֆրանսիացի ճանապարհորդ Ժան Շարդենը, 1812թ. դիվանագետ Ֆրեյգանը, Անգլիացի ճանապարհորդ, աշխարահագրագետ Հենրի Լինչը երկու անգամ՝ 1893 և 1898 թվականներին, եղել է Հայաստանում, և իր տպավորություններն ամփոփել «Հայաստան» ակնարկների գրքում:

...1918թ. մայիսի 28-ին Երևանը հռչակվեց Հայաստանի Հանրապետություն, իսկ 1920թ. նոյեմբերի 29-ին՝ Խորհրդային Հայաստանի մայրաքաղաք, որը Խորհրդային Միության առաջին քաղաքն էր, որ ունեցավ գլխավոր հատակագիծ: Ակադեմիկոս Ալեքսանդր Թամանյանի հեղինակած գլխավոր հատակագիծը հաստատվեց 1924 թվականին. նախատեսված էր 150000 բնակչի համար:

Ժամանակի ընթացքում քաղաքի վարչական տարածքը մեծացավ 5 անգամ: Սկսվեց կառուցապատումը. Երևանը կառուցապատվում էր բազալտով, գրանիտով, մարմարով. ամենատարածված շինանյութը վարդագույն տուֆն էր: Եվ քանի որ այդ շինանյութն ինքնատիպ գունագեղություն ու առանձնահատուկ երանգ էր տալիս քաղաքին, Երևանն անվանեցին «վարդագույն քաղաք»: Հետագայում Երևանը դարձավ ոչ միայն անկախ Հայաստանի Հանրապետության, այլև աշխարհասփյուռ հայության մայրաքաղաք:

Խորհրդային Միության փլուզումից հետո Հայաստանը 1991թ. սեպտեմբերի 21-ին անկախ հռչակվեց, և Երևանը պահպանեց մայրաքաղաքի կարգավիճակը:

Անկախությունը ձեռք բերվեց շատ թանկ գնով. Շիրակի և Լոռվա մարզում 1988թ. դեկտեմբերի 7-ի երկրաշարժը խլեց ավելի քան 25.000 կյանք, 1990-1994թթ. Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը կործանեց հազարավոր կյանքեր: Երկիրն էներգետիկ ճգնաժամ ապրեց, շարունակական շրջափակումները համարյա քայքայեցին երկիրը՝ Երևանը գցելով տնական քաոսի մեջ:

Երևանն անընդհատ փորձությունների է ենթարկվում, սակայն նորից շունչ է առնում, հնամենի քաղաքը նոր դեմք է ստանում՝ դառնալով աշխարհով մեկ սփռված տասը միլիոն հայ ազգի սիրտն ու ոգին:

«Էրեբունի-Երևան»-ի առաջին պաշտոնական տոնակատարությունն անցկացվել է 1968թ. հոկտեմբերին. նշվում էր մեր մայրաքաղաքի հիմնադրման 2750-րդ տարեդարձը: Միջոցառումները շատ էին, բազմազան ու բովանդակալից. հրատարակվեցին Երևանի պատմությունը ներկայացնող նոր գրքեր, էկրան բարձրացան Երևանի առօրյան արտացոլող նոր ֆիլմեր, բացվեցին ցուցահանդեսներ, ստեղծվեցին Երևանի մասին նոր երգեր, թողարկվեցին բազմապիսի հոբելյանական հուշանվերներ: Գեղեցիկ միջոցառումներ էին Ծաղկի տոնը, Երգի տոնը, որի ժամանակ 2750 հոգանոց երգչախումբն առաջին անգամ կատարեց «Էրեբունի-Երևան» օրհներգը: Այդ օրերի նշանակալի իրադարձություններից էր Երևանի հիմնադրման թանգարանի բացումն Արին-Բերդ բլրի ստորոտում: Թանգարանին հարող փողոցն անվանակոչվեց «Էրեբունի», բացվեց 2750 շատրվաններով պուրակը, աղբյուր-հուշարձան տեղադրվեց Հանրապետության հրապարակում, նախագծվեց «Էրեբունի» գորգը, 2750 ծառ տնկվեց Արին-Բերդի ստորոտում և, վերջապես, հոբելյանական զանգվածային միջոցառումները եզրափակվեցին Հանրապետական մարզադաշտում՝ հանրահավաք-տոնահանդեսով:

Ավանդական դարձած այս տոնը տարեցտարի դարձավ ավելի բազմաբնույթ, ավելի ժողովրդական: Երևանցիներից շատերը վկաներն են այդ անմոռանալի տոնական օրերի և հանդիսությունների:

Այս տարի, հաշվի առնելով աննախադեպ պատերազմի արհավիրքները, համահայկական սուգը, «Էրեբունի-Երևան» տոնակատարությունը, բնականաբար, չկայացավ, 2021թ. բյուջեով «Էրեբունի-Երևան»-ի համար նախատեսված ֆինանսական միջոցներն ուղղվեցին «100 տուն Արցախում» ծրագրի աջակցմանը, Երևանի մշակութային հաստատությունների զարգացման ծրագրերին, «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի և 90-ամյա հոբելյանը նշող Երևանի պատմության թանգարանի արդիականացման ծրագրերին:

Մենք դեռ շա՜տ ենք տոնելու. կբուժվեն մեր հուգու խոր վերքերը, ավիրված տները նորից կշենանան, նորից կծաղկի Արցախ-Հայաստան աշխարհը: Շատ են փորձել Հայաստանը ջնջել աշխարհի քարտեզից, բայց չի հաջողվել. էլի՛ չի հաջողվի, մենք դեռ ասելիք ունենք: Եվ աշխարհը պիտի ընկալի, որ հայը զավթող չէ, հայը գոյության, իր հայրենիքը պահող զինվոր է, զինվոր, որ մինչև վերջին շունչը կյանքի գնով կպահպանի մայր հողը:

Հայաստանի պատմության մեծ գիրքը տառապանքի բազմաթիվ էջեր ունի: Եվ այնուամենայնիվ, չնայած այս բոլոր փորձություններին, որոնք կարող էին լրջորեն սպառնալ հայ ժողովրդի գոյատևմանը, հայերը ոչ միայն գոյատևեցին իրենց պատմության բոլոր փորձություններից, այլև ստեղծեցին աշխարհաճանաչ քաղաքակրթություն:

Արուսյակ Քոչարյան

ՄԵԾ ՀԱՎԱՏՈՎ

Ծնվել ու հասակ եմ առել գեղատեսիլ Արցախ աշխարհի չքնաղ մայրաքաղաքում՝ Ստեփանակերտում: Ինչպես բոլորը, այնպես էլ ես, մանկուց ունեցել եմ շատ երազանքներ, որոնց վերաբերվել եմ գուրգուրանքով ու շտապել եմ իրականացնել և կյանքի կոչել: Իմ չարաճճի ու անհոգ տարիներին տուն-դպրոց ճանապարհին հաճախ էի հանդիպում գեղեցիկ ու կոկիկ համազգեստով ոստիկանների, որոնք ինքնավստահ քայլվածք, սևեռուն հայացք ունեին և կիրթ մարդուն վայել պահվածք: Թաքուն մի ակնածանք առաջացավ նրանց հանդեպ, և սկսեցի հետաքրքրվել ոստիկանի գործառույթներով, կրթությամբ և այն ամենով, ինչ վերաբերում էր այդ ոլորտին: Հիշում եմ՝ մի գեղեցիկ օր էլ մտա տուն և ինքնագոհ գոչեցի՝ վերջ, որոշել եմ, ոստիկան եմ դառնալու: Մայրս, ում համար հայտարարությունս խիստ անսպասելի էր, տեղում ծգվեց ու մեղմ ժպտաց: Այդ պահին ինձ դժվար էր որոշել՝ մայրիկս ուրախությունի՞ց ժպտաց, թե՞ իմ անակնկալ հայտարարությունից, բայց մի բան պարզ էր, որ վճիռս անբեկանելի է: Հաճախ էի ինձ պատկերացնում համազգեստով իմ հարազատ քաղաքի հրապարակով քայլելիս, իսկ մարդիկ ակնածանքով նայում էին ինձ ու ժպտում: Այսպես անհոգ, ապագայի հավատով անցնում էին տարիները, բայց պայթեց պատերազմը, և օրերն Արցախում այլ ընթացք ստացան: Միանգամից փոխվեց ամեն ինչ, հայրենի հողս ոտքերիս տակ գունափոխվեց, հրաշք բնաշխարհիս ծաղիկներն արնաներկ էին, հողից անգամ արյան հոտ էր գալիս: Ազգիս լավագույններին հողն իր գիրկն առավ (պարզվում է՝ հողն էլ ընտրություն անել գիտի)... 44-օրյա դաժան պատերազմը փոխեց բոլորիս կյանքի ռիթմը: Շատ կորուստներ ունեցանք, կորցրինք Արցախիս մեծ մասը, մարդիկ մնացին անտուն ու անօթևան, անհույս ու հոգով փշրված...Բայց ապրել էր պետք:

Շատ բան մեռավ իմ մեջ, շատ բան փոխվեց, բայց ոստիկան դառնալու երազանքս ժամանակի հետ փոխվեց մոլուցքի, և ես արդեն ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի սովորող եմ: Սովորողների շրջանում միակ արցախուհին եմ, և ընկերներս ինձ կոչում են «ղարաբաղցի աղջիկ», որն ինձ ավելի է պարտավորեցնում և ուրախացնում: Աներկբա որոշել եմ՝ շատ լավ եմ սովորելու և ուսումնառության ընթացքում բարձր եմ պահելու արցախցու պատիվն ու արժանապատվությունը, իսկ ուսումս ավարտելուց հետո վերադառնալու եմ հայրենի Արցախ և մասնակցելու եմ հայրենիքիս շենացման ու բարգավաճման վեհ գործին:

Հավատում եմ Արցախիս հաղթանակներին, որովհետև ես ինձ ևս հավատում եմ:

Լուիզա Խաչատրյան
ակադեմիա 1-ին կուրս

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒՄ ԵՆ ՄԵՐՈՆՔ

ՀԱՐՍՏՈՒԹՅԱՆ ԳԱՂՏՆԻՔԸ

Ինձ գանձեր պետք չեն, գանձերը քիչ են,
Ինձ մաքուր սրտի բերկրանքը տվեք,
Առանց նվիրում կյանքս ոչինչ է,
Ինձ զոհաբերման սխրանքը տվեք:

Գանձերը քիչ են, դրանք ոչինչ են,
Ես չեմ լիանում կեղծ առատությամբ,
Դուք ինձ նվիրեք աղքատ մաքրություն,
Որ հարստանամ այդ աղքատությամբ...

Ռուսլան Մարանդյան

ԳԵՏԵՐԸ ԵՐԿՐԻՍ

Գետերը երկրիս գարուն են բերել, զարթոնք, ծաղիկներ,
Ցողել են ամռան ջերմագույն արև, քնքշաբույր հովեր,
Մեղմօրոր աշուն, հորդառատ անձրև, քամի են բերել
Եվ ձյունե փափուկ վերմակի ներքո դանդաղել, նիրհել:

Գետերը երկրիս նոր հուն են բացել, ճանապարհ հարթել,
Խորդուբորդեր են ջրի տակ առել, գաղտնիքներ պարպել,
Անուշ կարկաչով դաշտեր են ջրել՝ ծաղիկներով լի,
Ու դարձել լճեր մեր բազմաչարչար գրկում քարերի:

Գետերը երկրիս դառը հուշեր են իրենց մեջ պահել,
Հայի արցունքից ահեղ վարարել, ափեր են քանդել,
Արյուն են տեսել, մահ ու կոտորած, անշունչ մարմիններ,
Թշնամու ձեռքից հրաշքով փրկված բազմաթիվ կյանքեր:

Գետերը երկրիս մեր պանդխտության երգերն են լսել,
Հողից կտրված անտուն, դեգերող ճամփորդ են տեսել,
Հորձանուտի մեջ պղտորվել են միշտ խոր ցավերից,
Իսկ հաղթանակի խաղաղ օրերին՝ զուլալվել նորից:

Կարինե Կիրակոսյան
ոստիկանության գնդապետ

ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ

Լրատվական գործունեություն իրականացնող ՀՀ ոստիկանության կրթահամալիր ՊՈԱԿ, հասցե՝ ք. Երևան, Ծովակալ Իսակովի փողոց, 29, հեռախոս՝ 010 77 08 73:
Գրանցման վկայական՝ 29021003884:

Տպագրվել է «Տիգրան Մեծ» ՓԲԸ-ում՝ Արշակունյաց 2:
Ծավալը՝ 1 մամուլ: Տպաքանակը՝ 300 օրինակ:
Ստորագրված է տպագրության 31. 10. 2021թ.:
Համակարգչային շարվածքը՝ «Պատիվ ունեմ» ամսաթերթի:
Գլխավոր խմբագիր՝ Ռ. Մուսայելյան:
Պատասխանատու քարտուղար՝ Արուսյակ Քոչարյան: